

**Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողով**

2021-2023

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2021

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իր աշխատանքներն իրականացնում է տարեկան գործունեության ծրագրի հիման վրա: Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի գործունեության ծրագրերի շարունակականությունը և ամրագրում Հանձնաժողովի լիազորությունների իրագործման խնդիրները, նպատակները, միջոցառումները և ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման գերակա ուղղությունները, ինչպես նաև, ապրանքային շուկաներում մրցակցության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և միջազգային համագործակցությունը:

Հանձնաժողովը 2017-2019 թվականների ընթացքում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք ուղղված են եղել տնտեսության տարբեր ոլորտներում և ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի գնահատմանը, ինչպես նաև դրանցում առկա մրցակցությանը խոչընդոտող հանգամանքների բացահայտմանը:

Հանձնաժողովի կողմից 2019 թվականին իրականացվել են մի շարք ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանցում մասնակից տնտեսվարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը:

Հանձնաժողովն իրականացրել է աշխատանքներ համակենտրոնացումների կարգավորման ուղղությամբ, որոնք միտված են ապրանքային շուկաներում մրցակցային պայմաններ ապահովելուն և մրցակցությունը սահմանափակող, ինչպես նաև գերիշխող դիրքի հանգեցնող կամ այդ դիրքն ամրապնդող գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնելուն: Ի դեպ, վերջին

տարիներին զգալի աճ է նկատվել համակենտրոնացումներին առնչվող վարչական վարույթների հարուցման առումով, ինչը պայմանավորված է Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների և հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Միաժամանակ, Օրենքի հնարավոր խախտումների բացահայտման նպատակով Հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության հիման վրա հաշվետու տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի, ակտիվների ձեռքբերումների և այլ միավորումների վերաբերյալ:

2017 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 316 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 173 վարչական վարույթ, որից 85-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 88-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա: Հարուցված վարչական վարույթների ընթացքում կիրառվել է 113 պատասխանատվության միջոց:

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 189 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 69 վարչական վարույթ, որից 64-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 5-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա: Հարուցված վարչական վարույթների ընթացքում կիրառվել է 55 պատասխանատվության միջոց:

2019 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 268 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 125 վարչական վարույթ, որից 40-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 85-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա: Հարուցված վարչական վարույթների ընթացքում կիրառվել է 46 պատասխանատվության միջոց:

2019 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել է անբարեխիղճ մրցակցության գործողության 53 դեպք՝ նախորդ տարվա 49-ի դիմաց, գերիշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային համաձայնությունները,

որոնք առավել ծանր խախտումներ են համարվում, ավելացել են 13 դեպքով (2018 թվականին՝ 9 վարույթ, 2019 թվականին՝ 22), համակենտրոնացման գործողությունները կազմել են համապատասխանաբար 32 և 36:

Հանձնաժողովի գործունեությունն առավել հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով 2017, 2018 և 2019 թվականների ընթացքում Հանձնաժողովն ակտիվորեն գործել է ծրագրային առաջնահերթությունների, մրցակցության ոլորտում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից երեք տարվա ընթացքում հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցային օրենսդրության խախտման դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ և կիրառել է պատասխանատվության միջոցներ: Բացի այդ, Հանձնաժողովը հսկողություն է իրականացրել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների և առևտրային ցանցերի գործունեության նկատմամբ: Մասնավորապես Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են եղել 51 պարենային ապրանքային շուկաներում 64 տնտեսվարող սուբյեկտների, ոչ պարենային 64 ապրանքային շուկաներում 73 տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:

Շարունակվել է համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունը և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ, որի շրջանակներում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են փոխադարձ այցեր, քննարկվել են մի շարք ապրանքային շուկաներում կատարվող ուսումնասիրություններին առնչվող մեթոդաբանությանը և առկա փորձի փոխանակմանը վերաբերող հարցեր:

Կարևորելով բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև սերտ համագործակցության հաստատումը՝ 2019 թվականի ընթացքում Հանձնաժողովը

համագործակցության հուշագրեր է կնքել Հայաստանում ֆրանսիական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ:

2017-2019թթ. Հանձնաժողովի կողմից ծախսվել է.

1.«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով համապատասխանաբար՝ 310632,2 հազ. դրամ (2017թ), 311383,7 հազ. դրամ (2018թ), 380984,4հազ. դրամ (2019թ),:

2.«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրով համապատասխանաբար ` 8757,2 հազ. դրամ (2018թ.), 12197.8 հազ. դրամ (2019թ.):

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, 2021-2023 թվականների ընթացքում իրագործման համար սահմանել է հետևյալ նպատակները.

- Սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաների ուսումնասիրություն, տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում և ապրանքային շուկաներում հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող (մենաշնորհ) դիրքի չարաշահման խախտումների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում:

- Պետական մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվության փոխանակման գործընթացի արդյունավետության բարձրացման և սեղմ ժամկետներում անհրաժեշտ տեղեկատվության ստացման նպատակով այլ պետական մարմինների էլեկտրոնային բազաներին հասանելիության ապահովում,

- Հանձնաժողովի գործունեության արդյունքում ստացված տեղեկատվության, ինչպես նաև կայացված որոշումների, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների ամբողջացման, համակարգման ու թվայնացման նպատակով էլեկտրոնային բազաների ստեղծում ու Հանձնաժողովի աշխատակիցների՝ այդ բազաներին հասանելիության ապահովում,

- ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում,

- Մրցակցության փաստարկման և քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում, տնտեսական մրցակցության օրենսդրական հարցերում հասարակության տեղեկացվածության ապահովման աջակցություն,

- Պետական օժանդակության տրամադրման նկատմամբ Հանձնաժողովի կողմից վերահսկողության իրականացում՝ ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման բնույթի խախտումների բացառման նպատակով:

- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հանձնաժողովին վերապահված պարտավորությունների և հանձնառությունների իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ մրցակցության, պետական օժանդակության, սպառողների շահերի պաշտպանության և պետական կազմակերպություններին առնչվող հարցերով:

Վերոնշյալ նպատակների և թիրախների իրագործելիությունը Հանձնաժողովը ծրագրում է ապահովել նշված միջոցառումների կատարմամբ.

- Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի և ուսումնասիրությունների սուբյեկտային, ժամկետային ու գործառույթային առանձնահատկությունների հաշվառմամբ վարչական վարույթի և

ուսումնասիրությունների իրականացման արդյունավետ կարգավորումների ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ու կանխարգելման գործառույթի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով հանկարծահաս ստուգումների (dawn raids) ինստիտուտի ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համաչափության, իրավական որոշակիության առավել արդյունավետ ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ պատասխանատվության միջոցների կիրառման մեթոդաբանության վերանայմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- գերիշխող դիրքի որոշման չափանիշների կատարելագործման, Օրենքով սահմանված չափանիշների վերանայման, ինչպես նաև գերիշխող դիրքի չարաշահման դրսևորումների ընդլայնման, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքի ոլորտում դրսևորվող չարաշահումների ներառման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- իրական փոխկապվածություն ունեցող անձանց՝ Օրենքի իմաստով որպես անձանց խումբ դիտարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի սեփականատերերի ու նրանց փոփոխությունների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տեղեկատվության ստացման հնարավորության ապահովման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- Օրենքով կիրառվող բազմաթիվ հասկացությունների իմաստային անորոշությունների վերացման ու թերի կարգավորումների ամբողջացման նպատակով Օրենքի 4-րդ հոդվածի մի շարք ձևակերպումների վերանայման և այլ

հասկացությունների սահմանմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում,

- Օրենքի դրույթների կիրարկման ապահովման նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակում, գործող նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացում:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

	Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝			Հիմնավորումներ
	2021	2022	2023	
1	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության դրույթների իրականացում			Հանձնաժողովը, նպաստելով ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով ստանձնած պարտավորությունների և գերակա խնդիրների իրականացմանը, ինչպես նաև ազատ և բարեխիղճ մրցակցության արդյունավետության բարձրացման նպատակով և ՀՀ կառավարության ամրագրված գործողությունների իրականացումը: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության դրույթների իրականացումը նպաստում է ներդրումային և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների համակարգված իրականացմանը:
2	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ			Հանձնաժողովի որոշումների հիմնավորվածության բարձրացման առումով՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի խախտումների վերաբերյալ ապացույցների ձեռքբերման և ամրապնդման մեխանիզմների ընդարձակում, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախագգուշացման առումով, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի

	<p>կատարելու, ինչպես նաև Օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի լրամշակում և նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում</p>	<p>չարաշահման կանխման առումով մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման և այլ չարաշահումների հայտնաբերման գործուն մեխանիզմների սահմանում, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենսդրության կիրարկման արդյունավետության բարձրացման նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակում և (կամ) գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործում:</p>
3	<p>Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը</p>	<p>Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական և ներդրումային, նորարարական և արտաքին տնտեսական, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնում:</p>
4	<p>Կադրերի վերապատրաստման աշխատանքների իրականացման խթանում</p>	<p>Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը շարունակում է ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն հանդիսանալ, այս պայմաններում ՄԺԾԾ բոլոր երեք տարիների ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն:</p>

5	Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը	Տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական համակարգի զարգացման նպատակով միջազգային փորձագետների, ԵԱՏՄ և ԵՄ մրցակցային մարմինների հետ ակտիվ համագործակցությունը ծրագրված աշխատանքների իրականացման համար հանդիսանում է անհրաժեշտ գործոն:
---	---	---

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականին նշված ծրագրի ճշտված պլանը կազմել է 393516,2 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 381135,0 հազ. դրամ, դրամարկղային ծախսերը՝ 380984,4 հազ. դրամ:

Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Այս տարվա ընթացքում Հանձնաժողովը տարբեր ապրանքային շուկաներում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում տնտեսական մրցակցության բնագավառում առկա խնդիրները: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հանձնաժողովի կողմից նախաձեռնված օրենսդրական փոփոխությունները և միջազգային լավագույն փորձի վրա հիմնված մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկումը էապես բարելավել են մրցակցային միջավայրը Հայաստանի Հանրապետությունում: Փոփոխություններ արձանագրվել են բազմաթիվ ապրանքային շուկաներում, այդ

թվում՝ այնպիսի շուկաներում, որոնք մրցակցության առումով համարվել են ռիսկային՝ պայմանավորված կենտրոնացվածության բարձր աստիճանով:

Թվարկված աշխատանքները կենսագործվել են Հանձնաժողովի զարգացման միջնաժամկետ ծրագրի բոլոր ուղղություններին համապատասխան:

Հանձնաժողովը պետք է ունենա աշխատակազմի պահպանման ծախսերի բավարար ծավալ, որպեսզի կարողանա պատշաճ իրագործել ներկայացված ծրագրի դրույթները:

Հանձնաժողովին 2019 թվականին «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով պետական բյուջեից հատկացվել է 381135,0 հազ. դրամ:

2021-2023թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով համապատասխանաբար՝ 550866,8 հազ. դրամ (2021թ), 522439,5 հազ. դրամ (2022թ), 527987,4 հազ. դրամ (2023թ):

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրով համապատասխանաբար՝ 3571,0 հազ. դրամ (2021թ), 3571,0 հազ. դրամ (2022թ), 3571,0 հազ. դրամ (2023թ):

2021-2023 թվականների համար «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի տարբերությունը պայմանավորված է Հանձնաժողովի կառուցվածքային փոփոխությամբ, հաստիքային միավորների ավելացմամբ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի բնականոն աճով:

2021-2023 թվականների համար «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված գումարները կազմում են «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի 30%-ը:

Հանձնաժողովին հատկացված գործունեության նոր տարածքով պայմանավորված՝ մակաբույծների ոչնչացման ծառայությունների ծախսի և դեռատիզացիայի անհրաժեշտություն չի առաջանում:

Կապի ծառայության հողվածով նախատեսված ծախսերի հաշվարկները կատարվել են պետական մարմինների կապի ծախսերի նորմերի հիման վրա և հիմնավորվում են համապատասխան մատակարարների հետ կնքված պայմանագրերով, որոնց ցանկը ներկայացված է ծախսերի հիմնավորումների տեղեկանքում:

Համակարգչային ծառայությունների հողվածով պլանավորված գումարը նախատեսվում է օգտագործել հաշվապահական ծրագրի սպասարկման, Մալբերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման և կայքի սպասարկման ծառայությունների համար՝ համաձայն համապատասխան պայմանագրերի: Տարբերությունը պայմանավորված է հաշվապահական ծրագրի տարեկան սպասարկման համար ներկայացված գնային առաջարկով:

Տեղեկատվական այլ ծառայությունների շրջանակներում նախատեսվում է տեղեկատվական թերթիկների, բուլվետների, հոլովակների պատրաստում և տարածում սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

Հաշվի առնելով շուկայական տնտեսությանը ու հատկապես ՀՀ-ում տնտեսության ճյուղային կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ մի շարք ապրանքային շուկաներում համակենտրոնացման բարձր մակարդակը, վստահաբար կարող ենք ասել, որ իրականացվող հետազոտական աշխատանքների հրատապությունը և արդիականությունը կասկած չեն հարուցում: Ելնելով առկա իրողություններից, ինչպես նաև երկրի ու հասարակության զարգացման անհրաժեշտությունից՝ տվյալ փորձագիտական աշխատանքները անհրաժեշտություն են: Այդ պատճառով ընդհանուր բնույթի այլ ծառայությունների

շրջանակներում նախատեսվում են լաբորատոր փորձագիտական ծառայություններ, որով և պայմանավորված է տարբերությունը:

«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» և «Ապահովագրական ծախսեր» հոդվածներով հաշվարկը կատարվել 4 (չորս) մեքենայի համար: Ավտոմեքենաները սպասարկում են ամբողջ աշխատակազմին՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում (գործուղում, հսկիչ գնումներ, դատարանի այցեր և այլն):

Հատուկ նպատակային այլ նյութերի հոդվածով պլանավորված գումարով նախատեսվում է իրականացնել հսկիչ գնումներ՝ տնտեսվարող սուբյեկտների մոտ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումները բացահայտելու նպատակով: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հատկացումների հաշվին վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների չափաքանակը «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված է 2000,0 հազար (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Հանձնաժողովի ներկայացրած գործուղումների քանակը հիմնավորվում է տարեկան կտրվածքով ստացված հրավերների, միջազգային կառույցներին, որպես անդամ հանդիսանալու և օտարերկրյա մրցակցային մարմինների հետ երկկողմ և բազմակողմ գործընկերության շրջանակներում տարբեր միջազգային միջոցառումներին մասնակցելու կարևորությամբ: Վերոհիշյալ համաժողովներին մասնակցությունը հնարավորություն է ընձեռում մասնակից լինել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին, խթանել մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմները, միջազգային հանրությանը ծանոթացնել Հանձնաժողովի՝ վերջին տարիների ձեռքբերումներին, ինչպես նաև ստանալ մրցակցության քաղաքականության կիրարկման ոլորտում նոր գիտելիքներ և փորձ:

Աշխատակիցների կողմից շահագործվող համակարգչային տեխնիկան և գրասենյակային գույքը ամբողջությամբ մաշված է և օգտագործման համար ոչ պիտանի, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու նորը:

Հանձնաժողովի համար առաջնային խնդիր է ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար կենտրոնացված տվյալների բազայի ստեղծումը և համապատասխան ավտոմատ կառավարման համակարգի ներդրումը:

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված նպատակի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող մարմին է: Հանձնաժողովը համաձայն որդեգրված հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, 2021-2023 թվականների ընթացքում

իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունը շարունակում է մնալ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն ու աջակցումը: Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի շարունակությունը: Ծրագրի մշակման համար իրավական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդված 8), Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը (հոդված 12), «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանձնաժողովը, համաձայն ծրագրային բյուջետավորման գործընթացի, յուրաքանչյուր տարի պարտավոր է իրականացնել լայն սպառման պարենային և ոչ պարենային հինգ շուկաների ուսումնասիրություններ, որի արդյունքում պետք է պարզի մրցակցային միջավայրին վերաբերող մի շարք ցուցանիշներ: Մասնավորապես, նախատեսվում է դիտարկել ապրանքային շուկայի կառուցվածքը, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները, չհայտարարագրված և արգելված համակենտրոնացման, գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնության կայացման, անբարեխիղճ մրցակցության դեպքերի, վարչական վարույթների հարուցման, պատասխանատվության միջոցների կիրառման, Հանձնաժողովի որոշումների բողոքարկման ցուցանիշները:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ	ԾԱԽՍԱՅԻՆ	ԾՐԱԳՐԵՐԸ	ԵՎ	ԾԱԽՍԱՅԻՆ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ				

Հանձնաժողովը պետք է ունենա աշխատակազմի պահպանման ծախսերի բավարար ծավալ, որպեսզի կարողանա պատշաճ իրագործել ներկայացված ծրագրի դրույթները:

Հանձնաժողովին 2019 թվականին «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով պետական բյուջեից հատկացվել է 381135,0 հազ. դրամ:

2021-2023թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով համապատասխանաբար՝ 550866,8 հազ. դրամ (2021թ), 522439,5 հազ. դրամ (2022թ), 527987,4 հազ. դրամ (2023թ):

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրով համապատասխանաբար՝ 3571,0 հազ. դրամ (2021թ), 3571,0 հազ. դրամ (2022թ), 3571,0 հազ. դրամ (2023թ):

2021-2023 թվականների համար «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի տարբերությունը պայմանավորված է Հանձնաժողովի կառուցվածքային փոփոխությամբ, հաստիքային միավորների ավելացմամբ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի բնականոն աճով:

2021-2023 թվականների համար «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված գումարները կազմում են «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի 30%-ը:

Հանձնաժողովին հատկացված գործունեության նոր տարածքով պայմանավորված՝ մակաբույծների ոչնչացման ծառայությունների ծախսի և դեռատիզացիայի անհրաժեշտություն չի առաջանում:

Կապի ծառայության հողվածով նախատեսված ծախսերի հաշվարկները կատարվել են պետական մարմինների կապի ծախսերի նորմերի հիման վրա և հիմնավորվում են համապատասխան մատակարարների հետ կնքված պայմանագրերով, որոնց ցանկը ներկայացված է ծախսերի հիմնավորումների տեղեկանքում:

Համակարգչային ծառայությունների հողվածով պլանավորված գումարը նախատեսվում է օգտագործել հաշվապահական ծրագրի սպասարկման, Մալբերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման և կայքի սպասարկման ծառայությունների համար՝ համաձայն համապատասխան պայմանագրերի: Տարբերությունը պայմանավորված է հաշվապահական ծրագրի տարեկան սպասարկման համար ներկայացված գնային առաջարկով:

Տեղեկատվական այլ ծառայությունների շրջանակներում նախատեսվում է տեղեկատվական թերթիկների, բուկլետների, հոլովակների պատրաստում և տարածում սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

Հաշվի առնելով շուկայական տնտեսությանը ու հատկապես ՀՀ-ում տնտեսության ճյուղային կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ մի շարք ապրանքային շուկաներում համակենտրոնացման բարձր մակարդակը, վստահաբար կարող ենք ասել, որ իրականացվող հետազոտական աշխատանքների հրատապությունը և արդիականությունը կասկած չեն հարուցում: Ելնելով առկա իրողություններից, ինչպես նաև երկրի ու հասարակության զարգացման անհրաժեշտությունից՝ տվյալ փորձագիտական աշխատանքները անհրաժեշտություն են: Այդ պատճառով ընդհանուր բնույթի այլ

ծառայությունների շրջանակներում նախատեսվում են լաբորատոր փորձագիտական ծառայություններ, որով և պայմանավորված է տարբերությունը:

«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» և «Ապահովագրական ծախսեր» հոդվածներով հաշվարկը կատարվել 4 (չորս) մեքենայի համար: Ավտոմեքենաները սպասարկում են ամբողջ աշխատակազմին՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում (գործուղում, հսկիչ գնումներ, դատարանի այցեր և այլն):

Հատուկ նպատակային այլ նյութերի հոդվածով պլանավորված գումարով նախատեսվում է իրականացնել հսկիչ գնումներ՝ տնտեսվարող սուբյեկտների մոտ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումները բացահայտելու նպատակով: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով հատկացումների հաշվին վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների չափաքանակը «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված է 2000,0 հազար (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Հանձնաժողովի ներկայացրած գործուղումների քանակը հիմնավորվում է տարեկան կտրվածքով ստացված հրավերների, միջազգային կառույցներին, որպես անդամ հանդիսանալու և օտարերկրյա մրցակցային մարմինների հետ երկկողմ և բազմակողմ գործընկերության շրջանակներում տարբեր միջազգային միջոցառումներին մասնակցելու կարևորությամբ: Վերոհիշյալ համաժողովներին մասնակցությունը հնարավորություն է ընձեռում մասնակից լինել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին, խթանել մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմները, միջազգային հանրությանը ծանոթացնել Հանձնաժողովի՝ վերջին տարիների ձեռքբերումներին, ինչպես նաև ստանալ մրցակցության քաղաքականության կիրարկման ոլորտում նոր գիտելիքներ և փորձ:

Աշխատակիցների կողմից շահագործվող համակարգչային տեխնիկան և գրասենյակային գույքը ամբողջությամբ մաշված է և օգտագործման համար ոչ պիտանի, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու նորը:

Հանձնաժողովի համար առաջնային խնդիր է ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար կենտրոնացված տվյալների բազայի ստեղծումը և համապատասխան ավտոմատ կառավարման համակարգի ներդրումը:

2021-2023 թվականներին Հանձնաժողովի ոլորտային ծախսերի գերակա ուղղություններն են.

- Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության դրույթների իրականացում,
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի լրամշակում և նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում,
- Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը,
- Կադրերի վերապատրաստման աշխատանքների իրականացման խթանում,
- Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը:

2021-2023թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով համապատասխանաբար՝ 550866,8 հազ. դրամ (2021թ), 522439,5 հազ. դրամ (2022թ), 527987,4 հազ. դրամ (2023թ):

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրով համապատասխանաբար՝ 3571,0 հազ. դրամ (2021թ), 3571,0 հազ. դրամ (2022թ), 3571,0 հազ. դրամ (2023թ):